



# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ Պ Ե Տ

<< \_\_\_\_\_ >> 2019թ.  
N: \_\_\_\_\_

ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16  
հտն. (0312) 3-26-10

## ՈՒՂԵՐԶ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Հարգելի՛ հայրենակիցներ,

Շնորհավորում եմ բոլորիս Հանրապետության տոնի առթիվ:

Ազատ ապրելու և անկախությունը պաշտպանելու պատրաստակամությունը հայ ժողովուրդը ևս մեկ անգամ ապացուցեց Բաշ-Ապարանի, Սարդարապատի, Ղարաքիլիսայի, Սոգթուրի մարտերում:

Հայկական պետականության վերականգնումը մեր ազգի դարավոր նպատակների իրականացումն էր և մեծագույն հաղթանակը:

Մայիսյան հերոսամարտերը վկայությունն են Հայաստանի ապագայի հանդեպ մեր ժողովրդի անկոտրում կամքի, միասնության, արիության և հավատի:

Հարգելի հայրենակիցներ շնորհավորում եմ Հանրապետության տոնի առթիվ, մաղթում իսաղաղություն և միասնականություն:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ